

ՀԱՄԱԽԻ ՔԱՂԱՔԻ  
ՇԱՄԱԽԻ ՔԱՂԱՔԻ  
ՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ  
ՀԱՅ ԿՐԹԱՐԱՆՆԵՐԻ ՎՐԱՅ (ԺԹ. ԴԱՐ)

ԳԷՈՐԳ ԱՏԵՓԱՆԵԱՆ

Շամախի քաղաքի հայութեան պատմութիւնը դարեր շարունակ գոյատեւած մի հարուստ ու ինքնատիպ հայկական ոստանի պատմութիւն է:

Տարիներ շարունակ աղբբեջանական պատմագրութիւնը (Զիա Բունիաթով՝ Ֆերիդա Մամեդովա<sup>2</sup>, Հ. Զիդղի<sup>3</sup> եւ շատ ուրիշներ) հետեւողականօրէն քողարկել է Շամախի քաղաքում հնուց ի վեր, ինչպէս նաեւ՝ ԺԹ. դարում ստուարաթիւ հայութեան գոյութեան փաստը: Միտումնաւոր կերպով լրութեան քողով է պատուել, կամ էլ ծայրայիդ դէպքում խիստ նուազեցուել է այդ քաղաքի սոցիալ-տնտեսական, հասարակական, հոգեւոր-մշակութային կեանքում հայերի ունեցած ծանրակշիռ ներդրումը:

Պատմութեան մէջ բազմիցս յիշատակուող հինաւուրց Շամախի քաղաքը տարածուած է Կովկասեան լեռնապարի հարաւարեւելեան ճիւղերի ստորոտին, փոքրիկ բլրաշարի վրայ՝ փռուած Ս. Սահակ եւ Զագալաւա գետակների խառնուելու տեղում: Քաղաքին ամենամօտիկ լեռներն են դէպի հիւսիս-արեւմուտք ձգուող Նզզարասին եւ Փեղրաքունը<sup>4</sup>. «Խոր ծորեր են Շամախու արեւելեան եւ արեւմտեան կողմերն: Արեւմտեան ծորով հոսում է Ալյսարու վտակն եւ արեւելեան ծորով մի փոքրիկ առու: Երկու ջրերս միանում են պարսից քաղի ստորոտում եւ խառնում Փիր-Սահար գետակին: Քաղաքիս վերնամասն հարք է, միջնամասն՝ լանջ, ստորին մասն՝ հովտահարք»<sup>5</sup> գրում է Մակար եպիսկոպոս Բարխուտարեանցը: Շամախիի մեծ զաւակ Ալեքսանդր Շիրվանզադէն զմայլանքով է նկարագրել իր ծննդավայր Շամախիի բնութիւնը. «Այնտեղ երկինքը կապոյտ է, ինչպէս Փիրուզա, երկիրը բոյսերով, ծաղիկներով փառքամ, ինչպէս մի սքանչելի պարտէզ: Այնտեղ ծմեռը եղանակը մեղմ է, դիրեկան, ոչ քամի, ոչ փոքրիկ: Խոկ գարնանը եւ ամռանը բարձրագագար ծառերի վրայ գիշեր-

ցերեկ երգում են անքի սլխակներ: Եւ ինչ համեղ մրգեր կան այնտեղ, եթէ զիտենաք, ինչ հոտակէտ պտուղներ»<sup>6</sup>:

Պատմական լիշտակութիւնները վկայում են, որ Հայ բնակչութիւնը Շամախիում բնակուել է վաղնջական ժամանակներից սկսած: Հայ էթնիկ տարրի վաղեմութիւնը փաստող ապացոյցներից խիստ բնորոշ է Սարգիս արքեպիսկոպոս Զալալեանցի վկայակոչումը. «Այսորիկ զիտօրայք իին են, եւ բնակիչըն (իմա՝ Հայերը - Գ.Ա.) բնիկ շամախնեցիր...»<sup>7</sup>: Համաձայն կովկասագէտ Ն. Զէյդլիցի վկայութեան՝ «Շամախի քաղաքի շրջակայրում սփռուած հայկական բնակավայրերը ամենայն հաւանականորեամբ կազմում են միջին դարերում առաել մեծ քանակութեամբ եղած բնակավայրերի մնացորդները»<sup>8</sup>:

Ազրիւրները վկայում են, որ տակաւին վաղ ժամանակներից Շամախիի Հայութիւնը ուսումնակրթական սերտ կապեր է ունեցել Սիւնեաց մետրոպոլիտական Աթոռի հետ: Զեռագիր լիշտակարանի վկայութեան համաձայն՝ Ցովհան Որոտնեցու մահուանից յետոյ (1382), երբ Տաթեւի Շամալսարանը գլխաւորում էր նրա աշակերտ Գրիգոր Տաթեւացին (1346-1411), Զուղայից, Թաւրիզից, Սիւնիքից եւ այլ վայրերից ուսանելու եկած 12 աշակերտներից մէկը, որի անունն էր Ցունան, Շամախից էր: Զեռագիր լիշտակարանում ասւում է. «Այլ մեր դարձուր ի վեր ի մեծ Գրիգոր Տաթեւացին, որ ի վրուվմաց վերին աշխարհին առեալ զաշակերտս իր ԲԺ (12)-ան... որ էին Վարդապետը՝ Միսիքար Տաթեւու, Յովիանէս ի վանիցն Հերմոնի, Գալուստ ի Վաղրնդեցու, Յունան ի Շամախու...»<sup>9</sup>:

Շամախիի Հայ բնակչութեան վերաբերեալ հետաքրքիր տեղեկութիւններ են Հաղորդում եւրոպացի մի շարք ճանապարհորդներ: Այս առումով ուշագրաւ տեղեկութիւն է Հաղորդում ԺԵ. դարի երկրորդ կէսի իտալացի դիւանագէտ, ճանապարհորդ ու վաճառական Զողեֆօ Բարբարօն, որը 1471-1473ին եղել է Վենետիկի դեսպանը Իրանի այդ ժամանակուայ տիրակալ Ակ-Կոյունլու Ռևուն-Հասանի արքունիքում: Վենետիկ վերադառնալու ճանապարհին Բարբարօն Թաւրիզից յետոյ լինում է նաեւ Շամախիում: Նկարագրելով Շամախին՝ նա գրում է. «Այս (Շամախին - Գ.Ա.) շատ լաւ քաղաք է, ունի չորս հազարից հինգ հազար տուն եւ շինում է մետարս, կտաւ եւ ուրիշ բաներ իրենց եղանակով: Գտնում է Մեծ Հայաստանում<sup>10</sup>, եւ բնակիչների մեծ մասը հայ են»<sup>11</sup>: Հարցի վրայ լայս է սփռում նաեւ Խորայէլ Օրու՝ եւրոպական տիրակալներին 1699 Սեպտեմբերի 22ին յղած զեկուցագրում տեղ գտած հետեւեալ վկայակոչումը. «Հարուստ եւ առեւտրական քաղաք է Շամախին-

...մենք այնտեղ ունենք եօրը հայ ծխական համայնքներ, եւ քաղաքի բոլոր վաճառականները եւ առևտրականները հայ են»<sup>12</sup>: Շամախահայերի վերաբերեալ ուշագրաւ տեղեկութիւններ է թողել 1780ականների սկզբներին երկրամաս այցելած Փրանսիացի ուղեգիր Լուի-Ֆրանսուա Ֆերիէ-Սովեէֆը: Նա գրում է, որ «Շամախիում բնակում էին շատ հայեր»<sup>13</sup>:

**Շամախիում ԺԹ.** առաջին դարակէսին վաճառականութեան, կրթամշակութային բնագաւառներում եւ հասարակական կեանքում հայ բնակչութեան դերի յետագայ բարձրացման շնորհիւ, այն դիտուել է նաեւ իբրեւ հայկական քաղաք: 1828ին, երբ Ռուսաստանը ստեղծում էր Հայկական Մարզը, Լազարեաններն իրենց առաջադրած ծրագրով, հայկական թագաւորութեան սահմաններում ընդգրկել էին նաեւ պատմական Հայաստանից դուրս գտնուող Շամախին եւ Շաքին: «Շատ մարզեր,- ասուած էր ծրագրում, - ինչպէս Հին Նախիջենանի, Երեւանի, Ղարաբաղի, Շաքու եւ Շամախու մարզերը՝ Եջմիածնի նախազահ վանքով կազմում են Հայաստանի վաղեմի բազատրութեան ընդհանուր կորիզը եւ զիսաւոր հիմքը»<sup>14</sup>: 1832ի տուեալներով քաղաքում հայապատկան տների թիւը հասնում էր 279ի<sup>15</sup>: Սարգիս Արք. Զալալեանցի հաղորդած տուեալների համաձայն Շամախիում 1850ին կար 4000 տուն, որից հայապատկան էր 600ը. «Ընակիչը են Հայր եւ Մահմետականը, տունը չորս հազար, յորոց վեց հարիւրն են Հայր...»<sup>16</sup>:

Շամախի քաղաքի ազգարնակչութեան բնական աճի վրայ խիստ բացասական ազդեցութիւն են թողել յաճախակի կրկնուող աւերիչ երկրաշարժերը: Շամախիում 1859ին տեղի ունեցած աղէտալի երկրաշարժի պատճառով, նոյն թուականի վերջերին նահանգային կենտրոնական վարչութիւնը տեղափոխուում է Բաքու<sup>17</sup>, որի հետեւանքով Շամախին աստիճանաբար կորցնում է երբեմնի փառքը եւ նիւթական բարեկեցութիւնը: Այդուհանդերձ, Բաքուի հետ անհաւասար մրցակցութեան պայմաններում Շամախին փորձում էր պահպանել իր հնամենի շուքն ու փայլը՝ երկրամասի հայութեան համար նախկինի պէս մնալով որպէս հոգեւոր-եկեղեցական եւ մշակութային կենտրոն: Շամախուց 1880 թուլիսի 20ին Մշակին յղած մի թղթակցութիւնում ասւում է, որ քաղաքն ունէր 900 տուն հայ: 1886ի տուեալներով, քաղաքի ազգարնակչութեան թիւը 22.139 էր (13.286 ար., 8.853 իգ.):<sup>18</sup> որից հայերի թիւը արտագաղթի հետեւանքով 3.962 էր (2.690 ար., 1.272 իգ.):<sup>19</sup> կազմելով ամբողջ բնակչութեան 17,90%օր:<sup>20</sup> Նոյն թուականի տուեալներով ուսւ բնակչութեան թիւը հասնում էր 668ի (512 ար., 156 իգ.), իսկ կովկասեան թա-

թարներինը (աղբաբեջանցիներ - Գ.Ս.)՝ 17.509ի (10.084 ար., 7.425 իգ.)<sup>23</sup>: Շամախու դաւառային վարչութեան կողմից 1894ին անցկացուած վիճակագրութեան համաձայն՝ քաղաքի ընդհանուր բնակչութեան թիւը 22.293 էր (13.552 ար., 8.741 իգ.), որից հայերի թիւը 4.042 էր (2.824 ար., 1.418 իգ.)<sup>24</sup>: Ըստ դաւանանքի՝ Հայ բնակչութիւնը բաղկացած էր առաքելականներից եւ լութերականներից<sup>25</sup>: առաքելական էին 3.641 (2.369 ար., 1.272 իգ.), լութերական՝ 401 (255 ար., 146 իգ.) հոգի<sup>26</sup>: 1897ի մարդահամարի տուեալներով քաղաքի ազգաբնակչութիւնը կազմում էր 20.007 (10.463 ար., 9.544 իգ.), որից Հայ՝ 2.515 (1.274 ար., 1.241 իգ.)<sup>27</sup>:

Արեւելեան Այսրկովկասի՝ Ռուսաստանի տիրապետութեան տակ անցնելը հնարաւորութիւն ընձեռուց արեւելեան բռնակալութիւնից ազատագրուած ժողովուրդներին, այդ թւում եւ Հայերին, վարել աշխոյժ հասարակական-քաղաքական կեանք: Տարանցիկ առեւտրական ճանապարհների վրայ գտնուող Շամախի քաղաքը ԺԹ- դարում եւս շարունակում էր մետաքսի արտադրութեան համաշխարհային նշանակութիւն ունեցող կենտրոններից մէկը<sup>28</sup>: 1849ի տուեալների համաձայն, քաղաքում կար 217 գործարան, որից միայն 187ը մետաքսագործական էր<sup>29</sup>: ԺԹ- դարավերջին քաղաքում գործարանների թիւը հասնում էր 500ի<sup>30</sup>: Շամախիում գործուած մետաքսն այնքան նուրր էր, որ շուկաներում հոչակ էր վայելում «Շամախու մետաքս» անունով<sup>31</sup>:

Հնուց ի վեր Շամախիի առեւտրի եւ արդիւնաբերութեան մէջ ազգեցիկ դեր ունէր Հայ բնակչութիւնը<sup>32</sup>: Ընդհանրապէս, շամախահայերն առաջնակարգ մասնակցութիւն ունէին քաղաքի տնտեսութեան բոլոր ճիւղերի զարգացման գործում, որի գրեթէ ամբողջ դրամագլուխը գտնուում էր նրանց ձեռքին<sup>33</sup>: Արտադրական այլ ճիւղերի (կաշեգործութիւն եւն-) համեմատութեամբ, շամախահայերը յատկապէս զբաղւում էին մետաքսաթելի արտադրութեամբ եւ ունէին գործարաններ<sup>34</sup>: Ուշագրաւ է այն փաստը, որ տակաւին ԺԵ-ԺԶ- դդ- Հայ վաճառականները մրցակցել են բրիտանական առեւտրական զօրեղ ընկերութիւնների հետ եւ պահպանել հում մետաքսի արտահանման մենաշնորհը: «Անգլիացիները,- գրում է Յարութիւն Քիւրտեանը,- 1561ին նուան Կովկասեան Հայաստան, Շամախի, Շիրվանի եւն. կողմերը առեւտուրի՝ մասնաւորապէս հում մետաքսի համար, սակայն հազի քանի մը տարի վերջ սկսան ինքինքնին անզօր գտնել Հայոց հետ մրցակցելու գործի մէջ»<sup>35</sup>: Շամախիի Հայ առեւտրականները զբաղւում էին մեծածաւալ առեւտրով եւ կապ էին պահպանում հեռաւոր երկրների հետ, իրենց ձեռքին էին կենտրոնացրել տարանցիկ առեւտուրը: Նրանց գոր-

ծունէութեան սահմանները ձգւում էին Ռուսաստանից, Պարսկաստանից, Եւրոպայից մինչեւ Կենտրոնական եւ Միջին Ասիայի երկրներ<sup>36</sup>: Հնուց ի վեր նրանց էր պատկանում Շամախու հում մետաքսի արտահանման առաջնութիւնը<sup>37</sup>:

Շամախահայ վաճառականները առեւտրական կենտրոններ էին հասցնում նաեւ արեւելեան ամենաբազմապիսի ապրանքներ (համեմունքներ, կաշուեղին, բուսական ներկեր, գորգեր եւն-), իսկ ներկրում էին տնային իրեր, պերճանքի զանազան առարկաներ եւն.<sup>38</sup> Շամախիի հայ տորոնավաճառները<sup>39</sup> կարմիր ներկի համար տորօն էին մատակարարում Մոսկուայի, Մարսէյի, Մանչեստրի ձեռնարկատէրերին<sup>40</sup>:

Քաղաքում հայերը զբաղւում էին 27 տարբեր արհեստներով, կային հայապատկան 97 ձեռնարկութիւն, 121 վարպետ եւ 109 ենթավարպետ ու աշկերտ<sup>41</sup>: Հայերի շրջանում տարածուած եւ զարգացած արհեստներից էին՝ ջուհակութիւնը, ոսկերչութիւնը, արծաթագործութիւնը, զինագործութիւնը, դերձակութիւնը, փականագործութիւնը, ձեռագործը, հրուշակագործութիւնը եւն-, որոնք բաւական եկամտաթեր արհեստներ էին<sup>42</sup>: Տնային արդիւնագործութեան մէջ առաւել տարածուած էր ձեռագործը, յատկապէս առաջնակարգ տեղ էր գրաւում մետաքսէ գործուածքի արտադրութիւնը<sup>43</sup>: Շամախիում պատրաստուած գլխաշալը մեծ պահանջարկ եւ կիրառութիւն է ունեցել ինչպէս տարածաշրջանում, այնպէս էլ Հայաստանի տարբեր շրջաններում<sup>44</sup>:

Շամախին յայտնի էր իր այգիներով եւ վարդաստաններով, որը արդիւնք էր ընակլիմայական նպաստաւոր պայմանների եւ բարերեր հողի<sup>45</sup>: Քաղաքը շրջապատուած էր գեղեցիկ այգիներով<sup>46</sup>: Շամախու շրջապատում եղած այգիների մէջ նշանաւոր էին Լալայեաններին, Քալանթարեաններին, Տէր-Յովհաննիսեաններին եւ Թառանեաններին պատկանող այգիները<sup>47</sup>:

Շամախիի շրջակայքն ունէր նաեւ նաւթային հարուստ անմշակ հողեր: Օրինակ՝ քաղաքից ոչ հեռու գտնուող Ալ Սերեբրեակեանցի կալուածքում 1898 Հոկտեմբերի սկզբներին հողի վերին շերտերում յայտնաբերուել էր մեծ քանակութեամբ նաւթ, որից օգտուել են նաեւ շրջակայ հայկական գիւղերը<sup>48</sup>:

Սոցիալ-դասային կառուցուածքի առումով՝ Շամախիի հայ ընակչութիւնը բաղկացած էր ազնուական, քաղքենիական, վաճառական, պատուաւոր քաղաքացիների եւ գիւղացիական դասերից<sup>49</sup>:

Շամախիում յայն ճանաչում ունէին Քալանթարեան, Դոլուխանեանց, Աւշարեանց, Շահնազարեանց եւ Լալայեանց տոհմերը: Նշանա-

ւոր Հայերից էին Նիկողայոս Ախմերդեանը, Մովսէս Ներսէսեանցը, Մեծլում Շահնազարեանցը, Գէորգ Տէր-Սահակեանցը, Մարգիս Տէր-Յովհաննիսեանցը<sup>50</sup> եւ ուրիշներ:

Շամախիի հայ մելիքական տոհմերից առանձնայատուկ դերակատարութիւն է ունեցել Լալայեան գերդաստանը: Այդ գերդաստանի շառաւիղներից Շամախիում եւ Բաքրում ծաւալած իրենց բարերարութեամբ յատկապէս մեծ ճանաչում էին ձեռք բերել Մարկոս բէկ Լալայեանի որդի Պօղոս բէկը եւ նրա 8 որդիները (Աթանաս, Յովհաննէս, Մկրտիչ, Մարգար, Գէորգ, Յակոբ, Մարկոս եւ Կարապետ)<sup>51</sup>: Լալայեանները Շամախիում ունէին շքեղ տներ, քարւանատներ, բաղնիք, քաղաքից դուրս կալուածներ որոնց թւում թաթարաբնակ երկու նշանաւոր գիւղ (Ղարաղալի, Արար Մարուն), ջրաղացներ, վարելատեղեր, արօտատեղեր, այգիներ, ամառանոցներ, ձմեռանոցներ, որսատեղեր եւ բազմաթիւ ծառաներ<sup>52</sup>: Կարապետ բէկ Լալայեանը մշտապէս նուիրատուութիւններ է կատարել յօդուտ Շամախու թեմական դպրոցի<sup>53</sup>: Նա իր նիւթական միջոցներով 1840-1841ին Շամախիում կառուցում է շքեղ մի տուն եւ այն նուիրում ոռուսական կառավարութեանը, ուր եւ յետագայում տեղաւորուում են նահանգային հիմնարկութիւնները<sup>54</sup>: Բաքրում բնակուող Գէորգ բէկը միշտ նիւթապէս աջակցել է Մարդարական Ընկերութեանը եւ Եկեղեցական Աղքատախնամ Հոգաբարձութեանը<sup>55</sup>: Իրենց հօր գործերը շարունակել են նաեւ որդիները: Օրինակ, Բաքրում բնակուող Աթանասի որդի Ալեքսանդրը, իր ժամանակի աչքի ընկնող գործիչներից էր: Բարեգործական իր ձեռնարկումների համար Ռուսաստանի ցար Ալեքսանդր Գ.ի կողմից արժանացել էր մի շարք պարգեւների (Աննայի 3րդ, Ստանիսլաւի 2րդ աստիճաններ եւ մեդալներ)<sup>56</sup>: Հայկական Աշխարհի վկայութեամբ: «Մեծապատի Պ. Լալայեան եղբայրները հայազն հարստականների մեջ առաջնակարգ տեղ են բնում Աստուծուց շնորհուած նիւթական ապահովութեամբ»<sup>57</sup>:

Այդ շրջանում, Բաքրում առեւտրի եւ արդիւնաբերութեան բնագաւառներում լայն գործունէութիւն էին ծաւալել նաեւ բնիկ շամախեցիներ Աղամեան եղբայրները՝ Արգարը<sup>58</sup>, Ալեքսանդրը, Յովհաննէսը եւ Դաւիթը, որոնք հիմնել էին «Եղբ. Աղամեան» առեւտրական ընկերութիւնը: Նշանաւոր եւ շնորհազարդ այդ գերդաստանի նահապետն էր ԺԹ. դարի վերջերին Շամախից Բաքրում մշտական բնակութիւն հաստատած վաճառական Սահակ Աղամեանը<sup>59</sup>:

Շամախին ծննդավայր է հայ մեծանուն մի շարք մտաւորականների: Արդաւել են ծնուել երկու քոյրերի զաւակներ Շիրվանզադէն եւ Յով-

Հաննէս Աբելեանը, վերջիններիս մօր մօրաքրոջ որդի կոստան Զարեանը<sup>60</sup>, գրականագէտ, թատերագիր եւ թարգմանիչ, Լայպցիգի Համալսարանի փիլիսոփայութեան դոկտոր Սեղրակ Թառայեանը, բանաստեղծ, արձակագիր Վահան Գալֆայեանը, գեղեցկատես գերասանուհի Եւգինէ Սեբարը<sup>61</sup>, պարուհի, գերասանուհի, գրող եւ գրականագէտ, իրանում եւրոպական տիպի առաջին թատրոնի հիմնադիր Սոֆիա Փիլրուդաղեանը, Արմէն Օհանեանը<sup>62</sup>, Ս. Պետերբուրգի Գեղարուեստի Ակադեմիայի շրջանաւարտ, Ռուսաստանի Վիբորգ քաղաքի դպրոցներից մէկում 1892ին նկարչութիւն դասաւանդած Ստեփան Ներսէսովը (Ներսէսեան, 1859-1894)<sup>63</sup>, Բաքում ճանաչուած երդուեալ ատենակալ եւ փաստաբան Սահակ Տէր-Ստեփանեանց Գուրգէնեանը (Աղուանից)<sup>64</sup> եւ շատ ուրիշ նշանաւոր գործիչներ:

Շամախիի հայութիւնը մեծ դերակատարութիւն ունէր նաեւ հասարակական կեանքում: Շամախու քաղաքային հասարակական վարչութիւնը գործել է 1896 Դեկտեմբերի 28ից<sup>65</sup>: Քաղաքային վարչութիւնը բաղկացած էր 12 հոգուց: Հայ վաճառականներից լիազօրներ են ընտրուել Մարտին Ղազարեանը, Քրիստափոր Մինասեանը եւ Յարութիւն Մատուրեանը<sup>66</sup>: Շամախու քաղաքային աւագ էր ընտրուել տեղի ազգեցիկ հայերից, մեծահարուստ Ալեքսանդր Լալայեանը, որի օգնականն էր վաճառական Անտոնեանը: Լալայեանն այդ պաշտօնը զբաղեցրեց մինչեւ 1899ի Յունիսը եւ ազատուեց Բաքուի նահանգապետին յղած իր դիմումի համաձայն՝ Բաքու մշտական բնակութեան մեկնելու պատճառով<sup>67</sup>: Աւելի ուշ՝ 1901-1902ին քաղաքային աւագի պաշտօնակատարն է եղել ազգեցիկ հայերից Ղազարեանը<sup>68</sup>: 1895ին, Շամախու գաւառային վարչութեան տարբեր գրասենեակային ծառայողներից ուուսներ էին 26ը, հայեր՝ 18ը, իսկ կովկասեան թաթարներ՝ 10ը, այդ թւում՝ գրասենեակային ծառայողներից ուուսներ էին 12ը, հայեր՝ 17ը եւ կովկասեան թաթարներ՝ 9ը<sup>69</sup>: Շամախում գործում էր Բաքուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան մասնաճիւղը<sup>70</sup>:

Շամախիի հայերի կենցաղը տարբերուում էր բուն Հայաստանում բնակուող հայերի կենցաղից ոչ էութեամբ, այլ առանձին մանրամասներով: Իսկ հիմնականում շամախահայերի կեանքը այնպիսին էր, ինչպէս Այսրկովկասի միւս ոչ-մեծ քաղաքներում: Նոյն ծէսերն ու սովորոյթները, միայն՝ երրեմն շատ գունեղ: Այսպէս, ժամանակի մամուլում հրատարակուած նիւթերից տեղեկանում ենք, որ շամախահայերը կենցաղում տարբեր առիթների (հարսանիք, նշանդրէք, թաղում, մկրտութիւն, եկեղեցական տօներ եւն.) ժամանակ իրենց ծախսումների մէջ ե-

ղել են չափազանց շռայլ։ Եւ ահա այդ սովորութեանը վերջ տալու նպատակով, Շամախու հայոց թեմը, յանձինս նրա առաջնորդների, ժամանակ առ ժամանակ մշակել է հասարակական կեանքի առաջընթացը ապահովող կանոնադրութիւններ։ Թեմի առաջնորդ Դանիէլ Արք. Շահնազարեանցը (Տարօնեցի, 1863-1868) 1865 Փետրուարի 25ին մշակում է մի կանոնադրութիւն, որը շամախահայերին յետ պէտք է պահէր այդ աւելորդ ծախսումներից<sup>71</sup>։ Ինչպէս ասուած է կանոնադրութիւնում. «...մեծք թէ փորոնք, տեսանելով մեր քաղաքի մի շոայլ արարողութիւնները ներս նտած մեր մէջ ունայն ծախքերով եւ սնուի սովորութիւններով, որից որ օր ըստ օրէ ծագում է եւ սաստկանում զանազան անկարգութիւններ եւ վնասներ մեր հասարակաց կենցաղվարութեան մէջ, հաստատեցինք այս յետազայ կանոնները, որպէս օրէնք յախտենական հասարակութեան օգտի համար»<sup>72</sup>։ Շամախիի հայերն անգամ ստորագրութեամբ հաստատում են այդ կանոնադրութիւնը, որը որպէս օրէնք պէտք է կիրառուէր իւրաքանչիւր շամախեցու կողմից։ Դժուար է ասել թէ որքան ժամանակ են կիրառուել կանոնադրութեան այդ կէտերը, մանաւանդ որ շամախահայերը իրենց կենցաղում հնուց ի վեր եղել են խիստ աւանդապահ եւ հիմնականում սովորոյթներով առաջնորդուող ժողովուրդ։ Յայտնի է սակայն, որ ԺԹ. դարի 80ականներին այդ բարքերը դարձեալ շարունակուել են նրանց կենցաղում<sup>73</sup>։

Ըստ ԺԹ. դարի վերջի վկայութիւնների՝ Շամախին համարւում էր քաղաքաշինութեան ժամանակի պահանջներին համապատասխան կառուցուած երկյարկ-եռայարկ տներով քաղաք։ Քաղաքի կառուցապատման համար զգալի աշխատանք են կատարել յատկապէս հայ արհեստաւորներն ու ճարտարապետները։ Շամախին ԺԹ. դարի վերջերին հիմնականում բաժանուած է եղել երկու մեծ թաղամասերի<sup>74</sup>։ Հայերից բացի, քրիստոնէական թաղամասում ապրել են նաեւ ոռւս պետական պաշտօնեաններ<sup>75</sup>։ Հայերի բնակելի տները եղել են միայարկ, երկյարկ ու եռայարկ, սիւնաշար պատշգամբներով ու նախասրահներով։ Գարրիէլ Քաջբերունու վկայութեամբ. «Այնուհետեւ դէպի վեր, լանջի վերայ շարունակում են քաղաքի հայկական քաղը եւ քազարի մի մասը իրենց տներով, փողոցներով, աղբիւններով եւ այլն։ Խսկ վերի՝ երկրորդ հարթավայրի վերայ տարածուած է քաղաքի նոր մասը, անելի գեղեցիկ եւ կանոնաւոր մասը, հայոց եւ խառն ոռուների հետ քրիստոնէայ քաղը, լայն՝ խաշածել փողոցներով...։ Նոր քաղումն են հայ եւ ոռւս բնակչութեանց աշքի ընկնող տները. զոր օրինակ հանգուցեալ Ալեքսանդր Լալանի տունը իր պարտէզով որ խիստ բարձրութիւնից նայում է

ներքի բազարի՝ բարձրների բաղի եւ մեջիտների վերայ: Նա շինած է պետութեան կողմից Շամախին նահանգական քաղաք եղած շրջանում եւ այդ տան մէջ բնակում էր նահանգապետը: Հայոց եկեղեցոց թիշ ցած բարձրանում է Նազարեանների եռայարկ սրբատաշ ամուր տունը, որ իրեն գոյութիւնը անսասան պահել է երկրաշարժերի դէմ: Ապա զալիս են Խճաւածկ փողոցի վերայ Քալանքարեանների երկյարկանի բարաշէն տունը, Սարգսեանի եւ այլոց տները: Միւս փողոցների վերայ Տէր-Ստեփանեանի, Արգումանեանի, Եզանեանի, Գեանջեցեանի եւ այլոց բազմաթիւ տները: Ապա զալիս են փողոցների վերայ հայոց խանութներ...»<sup>76</sup>: Քաղաքում հայապատկան տներն իրենց ճարտարապետական յօրինուած քով եւ շքեղութեամբ զգալիօրէն տարբերուել են թաթարների տներից: «Շամախու հայ եւ թորքի հին բնակարանը միմեանց նման է, իսկ նոր շինութիւնների մէջ հայինը զերազանց է: Վերջին ժամանակներս անհատների տան կտուրները ծածկում են կուպրով, որ բերում է Բարուից: Բոլոր թէ հին եւ թէ նոր տները բարաշէն են»<sup>77</sup>, գրում է Մշակը:

Հայերը նկատելի վերելքի էին հասել նաև Շամախիի մշակութային կեանքում, որով եւ իրաւամբ Շամախին համարւում էր հայկական մշակոյթի կենտրոն: 1870ին հիմնուել է Շամախու երկսեռ դպրոցների գրադարանը<sup>78</sup>: 1870ականների վերջերին մի խումբ թատերասէրների կողմից կազմակերպուել են ներկայացումներ<sup>79</sup>: Այդտեղ տարբեր տարիներին թատերական հիւրախաղերով հանդէս են եկել Բաքուի հայկական եւ ոռւսական թատերախմբերը<sup>80</sup>: Այնտեղ գարգացած էր Ասիական Պարարուեստի Դպրոցը. դեռևս 1876ին Փրանսիացի գրող կոմս Դը Գորինօն իր «Շամախեցի Պարուճին» վերտառութեամբ պատմուած քում գրել է. «Քաջ յայտնի է, որ Շամախի քաղաքը նշանաւոր է իր հաճոյքների նուրբ ընտրութեամբ: Այնտեղ կար պարուիների դպրոց, որոնք ամեն երկրում հիացում էին պատճառում եւ նշանաւոր էին մինչեւ պարսկական նահանգները: Բնականաբար, մարդիկ զանգուածարար գնում էին այս նուրբ տեղը՝ ընթռչնելու համար այդքան գեղեցիկ հոգիների տեսարանը»<sup>81</sup>: Այդ դպրոցի լաւագոյն սաներից է եղել շամախեցի պարուճի, վերոյիշեալ Արմէն Օհանեանը<sup>82</sup>:

Շամախիի հայութիւնն ունեցել է ժողովրդական հարուստ բանահիւսութիւն: Գրականութեան ակունքը եղել է աշուղական պոեզիան, որն սկսած ԺԼ. դարից զարգացում էր ապրում Շամախիում<sup>83</sup>: Շամախիում արմատաւորուած գուսանա-աշուղական արուեստի շօշափուկները հասնում էին մինչեւ Դաղստան եւ Աստրախան<sup>84</sup>: Բնութագրուող

ժամանակաշրջանում Շամախիում հանդէս եկան մի շարք երգիչ-զուսաններ, որոնցից նշանաւոր են եղել՝ Շամախի քաղաքում գործած, մասնագիտութեամբ ուկերիչ Արրահամ Մարտիրոսեանը (աշուղական անունը՝ Զարգեար, վերցրել է իր հօր արհեստի անուանումից (1824-1874)<sup>85</sup>: Նա գրել է Հայերէն բանաստեղծութիւններ եւ աշուղական երգեր: Բաքուում 1886ին ապա 1890ին լոյս են տեսել նրա երգերը «Զարկեարի Քնարը» վերնագրով<sup>86</sup>: Շամախիում գործում էր կոյր երգիչ Յարութիւն Յովհաննիսեան-Ալեքսանդրեանը (աշուղական անունը՝ Մայիֆ (1825-1901)<sup>87</sup>: Հանդէս գալով ոչ միայն որպէս ստեղծագործողներ, այլեւ կատարողներ, Շամախիի հայ աշուղները յօրինել են այնպիսի երգեր, որոնք լինելով իրենց ժամանակակիցների մտքերի ու յոյզերի արտայացտութիւնը, սիրուել են նրանց կողմից, մտել երաժշտական կենցաղի մէջ, իրենց ստեղծած երգերով զգալի չափով հարստացրել հայրենի աշուղական գրականութիւնը: Շամախիի հայ աշուղներն իրենց երաժշտարուեստը ցուցադրում էին Բաքուում յաճախակի կազմակերպուող «արեւելեան» համերգերի ժամանակ, ուր հանդէս էին գալիս նաև օտարազգի աշուղները<sup>88</sup>: Այդ երեկոները մեծ ժողովրդականութիւն են վայելել բաքուահայերի շրջանում: Շամախիում շաբաթը մէկ անգամ կազմակերպում էին նաև գրական երեկոներ, ուր քննարկելում էին ժամանակակից գրողների ստեղծագործութիւնները<sup>89</sup>:

Գրագիտութեան մակարդակով շամախահայերն անհամեմատ բարձր դիրքում էին կովկասեան թաթարների նկատմամբ: Տարբեր տարիներին շամախահայերը մշտապէս բաժանորդագրուել են Հայաստանը լրագրերի եւ ամսագրերի, այդ թւում՝ Արարատ, Մեղու Հայաստանի, Բազմազէպ, Նոր-Դար եւն..: Ուշագրաւ է այն, որ քաղաքում գործող երկու գրասենեակները, որոնք կատարում էին վճարովի տարաբնոյթ ծառայութիւններ (ինդրագրերի եւ նամակների գրութիւն, թարգմանութիւններ եւն..) պատկանում էին Հայերին<sup>90</sup>: Մշակի Շամախիի թղթակցի «Հ. Ղ.» ծածկանուով հանդէս եկող Գարեգին Քչնյ. Ղուկասեանի թղթակցութիւնում այս առիթով ասւում է. «Շամախու թուրքերի մէջ շկայ ոչ մի հատ բարեգործական կամ որիշ հասարակական ընկերութիւն»<sup>91</sup>:

Շամախիում զարգացած էր նաև հրատարակչական գործը: 1849ին Մովսէս Զոհրապեանցին, Մարգար Ղուլիեանցին եւ Մինաս Տարղլիչեանցին պատկանող տպարանում տպագրում է շուրջ 265 էջանոց Գիրք Մազմոսաց Դաւթի աշխատանքը, որի յիշատակարանում ասուած է. «Ո հայրապետութեան տեառն Ներսէսի Ե. կարողիկոսի Ամենայն հայոց

եւ զանազան նշանաց ասպետի. Հրամանաւ վիճակային Հայոց Կոնսիստորիային Շիրվանու. Շամախի, ի տպարանի երից ընկերացն՝ Մովսիսի Զոհրապեանց, Մարգարեի Նովիեանց եւ Սինասի Տարդիլի-ջեանց»<sup>92</sup>: Շամախիում 1856ին ոմն Աժա Գրիգորեան Մոսկուայից բերած Հայկական տառերով հիմնում է մի Համեստ տպարան, ուր տպագրուում է տեսնում Մովսիս Զոհրապեանի Պարապոյ Ժամք բանաստեղծութիւնների ժողովածուի Ա. Հատորը: Այդ ժողովածուում զետեղուած էր նաև Զորջ Բայրոնի «Շիլոնի Կալանաւորը» ստեղծագործութիւնը<sup>93</sup>:

Անդրադառնալով Շամախի քաղաքի համբնդհանուր գարզացման գործում Հայերի ունեցած մեծ դերակատարութեան փաստին՝ «Շամախեցի» ծածկանուով Հանդէս եկող Յարութիւն Բարաղամեանը գրում է. «Եւ շամախեցիներից ոչ ոք կարող ուրանալ հայերի մեծագործութիւնները թէ քաղաքին ջուր մատակարարելու խնդրում, թէ դպրոցական եւ թէ այլ հանրօգուտ ասպարէզներում, որոնցից հաւասարապէս օգուտում էին բոլորը, առանց ազգի խտրութեան: Մինչեւ բուրքերի մեջ քաղաքակրթութիւնը կասեցնող երեւյթներից դուրս՝ սպանութիւններից, աւագակութիւններից քացի այլ քան մենք չենք կարող ցոյց տալ ուր մնաց հանրօգուտ գործ կամ քարեզործութիւն...»<sup>94</sup>:

Հայերի ու կովկասեան թաթարների հասարակական կեանքի սոցիալ-քարոյական նկարագրի համեմատական բնութագիրը ներկայացնելու համար մէջբերենք Մշակում Շամախիի թաթարների վերաբերեալ արուած Հետեւեալ դիտարկումները. «Տեղույս բուրք ազգաբնակչութիւնը, երէ ասեմ աշխարհակալ Զինկիզխանի եւ Լանկ-Թամիրի օրերից մինչեւ այսօր իր վայրենի եւ արինարբու բնաւորութիւնից մի կորեկի շափ բողած չէ, բոլորովին չեմ սխալուի... Բայց մեր տեղույս մահմետական տարրը, չնայելով իր, հանարեա թէ, մի ամբողջ դար ուսաց ողորմած Կայսրութեան օրենքներով կառավարուելուն, դարձեալ իր արինասէր եւ սպանիչ բնաւորութիւնից մի մանանիսոյ հատի շափ չէ կորցրած: Թաղը քաղի վրայ կը յարձակուեն: Այդ դէպքում ոստիկանութիւնը եւ քաղաքին կառավարութիւնը անկարող կը լինի նրանց խաղաղեցնելու: Յայտնի է 1866 թ. կոտորածը, երբ մի վարունգի առիքով 76 բուրք մարդ սպանուեցին»<sup>95</sup>:

## ԿՐԹԱԿԱՆ ՄԱՐԶԸ

Այսրկովկասը Ռուսաստանին միաւորելուց յետոյ, չնայած ցարիզմը վարում էր Հպատակ ժողովուրդների գաղութացման եւ ուժացման քաղաքականութիւն, այդուհանդերձ ժթ. դարի սկզբին եւ յաջորդ տաս-

նամեակների ընթացքում սոցիալ-տնեսական վիճակի բարելաւմանը գուգընթաց որոշակի աշխուժացում նկատուեց Շամախիի հայերի կրթական կեանքի բնագաւառում։ Դպրոցը՝ աճող սերնդի կրթութեան եւ լուսաւորութեան գործը, նաև անդի հայ բնակչութեան առաջնահերթ եւ հրատապ ինդիրն էր։ Մահմեդական հոծ զանգուածով շրջապատուած հայ բնակչութեան համար ուժացումից խուսափելու եւ ազգային ինքնագիտակցութիւնը պահպանելու գործում աւելի էր մեծացել ազգային լեզուով գործող դպրոցների դերը։ Եւ այդ էր պատճառը, որ Շամախու թեմի առաջնորդներն ու բարեգործական ընկերութիւններն իրենց ուշադրութիւնը մշտապէս բեւեռում էին այդ խնդրի վրայ։

Նախքան հայկական դպրոցների բացումը Շամախիում հայ երեխաներն իրենց ուսումը ստացել են արքունի ուսումնարաններում։ Յարական արքունիքի կողմից 1829 Օգոստոսի 2ին հրապարակուած «Անդրկովկասեան Ուսումնարանների Կանոնադրութեան» հիման վրայ ուսումնարաններ բացուեցին նաեւ Շամախիում, Ղուրայում, Բաքուում եւ Դերբենդում։ 1838ին ուսումնարան է հիմնւում նաեւ Շամախիում, ուր 1858ի դրութեամբ 144 սովորողներից հայեր էին 81ը<sup>96</sup>։ Ընդհանուր առմամբ, 1866ի դրութեամբ Շամախի քաղաքում գործող երկու ուսումնարաններում սովորում էր 169 (117 ար., 52 իգ.) հայ աշակերտ եւ դասաւանդում էր 9 ուսուցչուհի<sup>97</sup>։ 1877ին Շամախի քաղաքում Բաքու-Դերբենդի վարչական տնօրինութեան իրաւասութեան ներքոյ բացուեց քաղաքային ուսումնարանը։ 1895ին այն ունեցել է 138 աշակերտ, որից հայ՝ 86 (20 գիւղաբնակ, 66 քաղաքաբնակ), 37ը՝ թաթար եւ 15ը՝ ուսւումնարանն ունեցել է գրադարան՝ 1343 կտոր գրքով, որից հայերէն՝ 24<sup>98</sup>։ Ինչպէս երեւում է բերուած օրինակներից, կովկասեան թաթարների յետամնացութիւնը ակնառու էր նաեւ կրթութեան բնագաւառում։ Այն աւելի ակնառու է դառնում ամբողջ բնակչութեան թուի հետ նրանց տուեալների համադրման դէպքում։ Հարցի առթիւ հետաքրքրական դիտարկում է անում ականաւոր արեւելագէտ եւ գրող Ագաֆանգէլ Կրիմսկին՝ նշելով. «Կովկասում նոյնպէս թիրքական ուսան այնքան էլ առաջադէմ շէր...»<sup>99</sup>։

Քննուող ժամանակահատուածում Շամախիում գործել են հայկական թեմական, ծխական եւ մասնաւոր դպրոցներ։ Ըստ այդմ՝

### Թեմական Դպրոց կամ Սեմինարիա

Ի տարբերութիւն ուսուսահայոց այն թեմերի, որոնք նիւթապէս գտնւում էին առաւել բարուօք վիճակում եւ կարճ ժամանակամիջո-

ցում ստեղծեցին թեմական հոգեւոր դպրոցներ, Շամախիում այդ գործընթացը տեւականօրէն ձգձգուեց: Հիմնական պատճառն այն էր, որ թեմը գտնուելով նիւթական սուղ պայմանների մէջ, միջոցներ չէր կառողանում հայթայթել թեմական դպրոցի բացման համար, ուստի եւ սկզբնական շրջանում բացուեց միայն տարրական եկեղեցական դպրոց<sup>101</sup>: Այս առումով հետաքրքրական է Ալեքսանդր Երիցեանի ընութագրումը Շամախու թեմի վերաբերեալ: «Այդ միջոցներում շատ խեղճ ու անբարեկարգ էր նաև Շամախու կամ Շիրվանի թեմը... ոչ մի ուսումնարան կար եկեղեցական հասոյթների սակաւորեան պատճառով»<sup>102</sup>: Թէեւ 1838ին թեմական իշխանութեան կողմից դպրոցի համար արդէն վարձուել էր շէնք, սակայն, համապատասխան ուսուցիչների բացակայութեան պատճառով դպրոցի բացումը յետաձգուեց մինչեւ 1840 երբ արդէն գտնուել էին 2 ուսուցիչ, որոնցից մէկն անգամ համաձայնուել էր աշխատել ձրիաբար: Սակայն, միջոցների պակասութեան պատճառով դպրոցը գործեց մինչեւ 1842<sup>103</sup>: Թեմական դպրոցի բացումը տեղի ունեցաւ 1844 Մայիսի 28ին (այլ աղբիւրների տուեալներով՝ 1843) թեմի առաջնորդ Մատթէոս Եպս. Վեհապետեանի (Երեւանցի, 1841 - 1847) ջանքերով եւ եկեղեցական մարմինների ու ընակչութեան հայթայթած միջոցներով<sup>104</sup>: Դպրոցում դասաւանդել են հայերէն եւ ոռւսերէն ընթերցանութիւն, վայելչագրութիւն, քերականութիւն, ճարտասանութիւն, երգեցողութիւն, թուարանութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն եւ սրբազն պատմութիւն: Դպրոցը թէեւ գտնում էր վատթար պայմաններում, այդուհանդերձ այն շարունակել է իր գործունէութիւնը եւ փակուել 1851ին<sup>105</sup>: Դպրոցի գործունէութեան երկրորդ շրջանը սկսւում է 1858ին, սակայն ոչ որպէս թեմական, այլ՝ ծխական հոգեւոր ուսումնարան<sup>106</sup>: Դպրոցի գործունէութիւնը որոշակի կանոնակարգուած հիմքի վրայ է դրել թեմի առաջնորդ Դանիէլ Արք. Շահնազարեանցը, որի օրօք առաջին անգամ կազմուել է դպրոցի կանոնադրութիւնը, ընտրուել են հոգարարձուներ, հրաւիրուել են համապատասխան ուսուցիչներ<sup>107</sup>: 1877ին դպրոցն ունեցել է 3 ուսուցիչ եւ 79 աշակերտ<sup>108</sup>: 1881ին դպրոցաշէնքի այրուելու պատճառով, դասերն անցկացուել են թեմի կոնսիստորիայի շէնքի վերնայարկում: Դպրոցը գործել է ծանր եւ սուզ պայմաններում ուստի եւ չի կարողացել բարձրանալ ծխականի մակարդակից: 1885ին դպրոցը դարձեալ ֆակուել է եւ վերաբացուել 1886ին, որից յետոյ այն ամբողջովին եւ պաշտօնապէս դասուել է ծխական դպրոցների շարքին եւ շարունակել է գոյութիւնը թեմի աղքատիկ եկամուտների հաշուին<sup>109</sup>: 1888-89 ուսումնական տարուայ վիքատիկ եկամուտների հաշուին:

ճակագրական տեղեկագրերում դպրոցը նշուած է ոչ թէ որպէս թեմական, այլ՝ տղայոց երկդասեան ծխական դպրոց՝ 147 աշակերտով<sup>110</sup>: Այսպիսով, թէեւ Շամախու դպրոցը կրում էր թեմական անունը, սակայն, աննպաստ պայմանների թելաղրանքով այդպէս էլ երբեք չհասաւ թեմականի մակարդակին:

Թեմի առաջնորդ Մեսրոպ արքեպիտկոսոս Սմբատեանցի (1887-1894) նախաձեռնութեամբ եւ ատենադպիր Աքրահամ քէկ Շահվերդեանցի օժանդակութեամբ դպրոցի նախկին տեղում 1890ին կառուցւում է նոր շէնքը<sup>111</sup>: Այդ շրջանում դպրոցն ունեցել է իր գրադարանն ու ընթերցարանը, ուր պահուել են 6 ձեռագիր եւ 450 հայերէն եւ ուռսերէն տպագիր գրքեր<sup>112</sup>: Տարբեր տարիների ընթացքում թեմական դպրոցին նուիրատուութիւններ են կատարել բարերարներ Կարապետ Լալայեանցը, Կարապետ Քալանթարեանցը, Նիկոլայ Կաճկանեանցը, Բաղդասար Նազարեանցը եւ Մարտիրոս Միրզաբեկեանցը<sup>113</sup>: Դպրոցին իր կտակով նիւթական միջոցներ է տրամադրել (300ռ.) նաեւ Բաքուի Ա. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու քահանայ Թաղէոս Բուղաղեանցը<sup>114</sup>: 1890ին դպրոցում սովորել են 80 աշակերտ, որից 47ը՝ վճարովի, 33ը՝ ձրի հիմունքներով<sup>115</sup>: Յետագայ ժամանակներում, երբ դպրոցը յայտնուել էր նիւթական անմիտմար վիճակում, Մեսրոպ Արք Սմբատեանցը ծրագրում է թեմական դպրոցը Շամախուց տեղափոխել Բաքու եւ այդտեղ բացել թեմական նոր դպրոց, որի մասին 1893 Դեկտեմբերի 20ին գրել էր Մկրտիչ Ա. Վանեցի կաթողիկոսին: Սակայն, մտավախութիւն ունենալով, որ Շամախուց երեխաները ի վիճակի չեն լինելու՝ գալ Բաքու եւ ուսում ստանալ, խնդիրն այդպէս էլ մնում է առկախ: 1895ին դպրոցն ունեցել է 5 ուսուցիչ եւ 127 աշակերտ<sup>116</sup>: Նոյն թուականին դպրոցի գրադարանն արդէն ունէր 772 անուն գիրք<sup>117</sup>:

1896ին դպրոցը դարձեալ փակուել է<sup>118</sup>: Մտահոգ դպրոցի վերաբացմամբ, Մկրտիչ Ա. կաթողիկոսը 1896 Հոկտեմբերի 27ի կոնդակով դիմում է Բաքուի հայ մհծահարուստներին եւ ակնկալում վերջիններիս նիւթական աջակցութիւնը<sup>119</sup>: Կաթողիկոսը մտադրուել էր վերաբացուող թեմական դպրոցը Շամախուց տեղափոխել Բաքու: Դպրոցի վերաբացման կազմակերպչական աշխատանքները գործի դնելու նպատակով կաթողիկոսի հրահանգով Բաքու է մեկնում եկեղեցական-կրթական գործի եռանդուն գործիչ Խորեն Եպս. Մտեփանէն: Նոյն թուականին շամախահայերը 400ից աւելի ստորագրութեամբ նամակով դիմում են Մկրտիչ Ա. կաթողիկոսին, խնդրելով նրանից դպրոցը վերաբացել ոչ թէ Բաքուում այլ Շամախիում: «Ամենիս սրտագին բադ-

ձանքն է,- գրում էին շամախահայերը,- մեր ճգնաժամի օրերում գերացուած տեսնել Շամախում մեր միակ միսիթար լոյս ու ապաւեն թեմական դպրանոցը հենց տարույս Սեպտեմբերից սկսած»<sup>120</sup>: Պէտք է նկատել այն հանգամանքը, որ թեմական դպրոցը Շամախուց Բաքու տեղափոխելու խնդիրն այդ օրերին լայն քննարկման առարկայ էր դարձել նաեւ մամուլում: Աւետիք Արասխանեանցը Մուրճ ամսագրում մի առանձին յօդուածով հանդէս գալով հարցի առնչութեամբ, առաջարկում է դպրոցը Շամախուց տեղափոխել Բաքու, այդ քայլը պայամանաւորելով նրանով, որ խիստ նուազել էր Շամախի եւ Գէօքչայ գաւառների հայ աշակերտների թիւը, մինչդեռ Բաքուում կարող էին սովորել նաեւ այդտեղ հաստատուած շամախեցիների եւ գէօքչայեցիների երեխաները: «Ինչ է Շամախու հասարակութիւնը, - գրում է Արասխանեանցը, - եթէ ոչ մի յետամնաց ժողովուրդ, որի ամենակենդանի ուժերի առաջին գործ է լինում քողնել այդ քաղաքը եւ հաստատուել Բաքում: Ինչ ունի Շամախու հայ հասարակութիւնը, համենատութեամբ Բաքուի»<sup>121</sup>: Թեմական դպրոցը Շամախուց՝ Բաքու տեղափոխելը նպատակայարմար է համարել նաեւ Շիրվանզաղէն»<sup>122</sup>:

Դպրոցը վերաբացելու եւ այն թեմականի աստիճանի բարձրացնելու ուղղութեամբ քայլեր է ձեռնարկել նաեւ թեմի առաջնորդ Կարապետ Եպս. Այվագեանը (1896-1898): Նրա կողմից 1898ին կազմւում է դպրոցի ծրագիրը եւ ներկայացւում էջմիածնի Սինողին, որպէսզի վերջինս ներկայացնի կառավարութեանը՝ ի հաստատում: Մկրտիչ Ա. կաթողիկոսը 1899 Փետրուարի 24ին թիւ 267 կոնդակով «առաջադրել է փորով առաջարկել Բարձրագոյն հաստատութեան Շամախու թեմական դպրանոցի կանոնադրութիւնը»<sup>123</sup>: Դպրոցը վերաբացուեց Շամախիում միայն 1905ին, եւ գործեց որպէս երկսեռ դպրոց:

Ամփոփելով նշենք, որ թեմական դպրոցը հայ հոգեւոր-մշակութային կեանքում իւրովի եւ հաստատուն տեղ է ունեցել: Թեմական այդ դպրոցում են ուսանել եւ թեմում յետագայում հոգեւոր ծառայութեան անցել մեծ թուով քահանաներ եւ եկեղեցական-ծխական դպրոցների ուսուցիչներ»<sup>124</sup>:

#### **Ս. Սանդուխտ Օրբորդաց Դպրոց**

Հիմնուել է 1867ին թեմի առաջնորդ Դանիէլ Արք. Շահնազարեանցի օրոք<sup>125</sup>: Այլ աղբիւրներով հիմնուել է 1869ին<sup>126</sup>: Այդտեղ աւանդուել է կրօն, հայոց պատմութիւն, աշխարհագրութիւն եւ բնագիտութիւն, գծագրութիւն, ուսուաց լեզու, թուարանութիւն, ազգային եւ եկեղեցա-

կան երգեցողութիւն, հայոց եւ ուստաց վայելլագրութիւն եւ ձեռագործութիւն<sup>127</sup>:

Հարկ է նշել, որ ուսումնական գործում շամախահայերը մեծ տեղ են յատկացրել կանանց կրթութեան հարցերին: Շամախուց Յովհաննէս Միրզաքեկեանի Արարատ ամսագրին տուած թղթակցութիւնում ասւում է. «Յուսալի է եւս Շամախույ հայ ժողովուրդից, որ պէտք է զրադի ժամանակիս պահանջման համեմատ ուշադրութեան արժանաւոր այն հասարակաց խնդրոյն, որ կը վերաբերի իրանց օրիորդական ուսումնարանին, անտարակոյս լինելով, թէ՝ պատրաստելու է նա ողջախոհ, եւ զաւակաց բարոյապէս եւ բնականապէս օգուտը եւ վնասը ճանաչող Աստուածապաշտութեամբ սնուած նայեր»<sup>128</sup>: 1868ին դպրոցը նիւթական անհրաժեշտ միջոցների բացակայութեան պատճառով գտնուել է վատթար պայմաններում: Դպրոցին նիւթական անհրաժեշտ օգնութիւն ցուցաբերելու նպատակով Շամախու թեմի առաջնորդ Անդրէաս Արք. Անդրէասեանը (Պոլսեցի, 1869-1874) 1869 Յունիսի 22ին թեմական դպրոցի դահլիճում տեղի հասարակութեան ներկայացուցիչների մասնակցութեամբ հրաւիրում է ժողով: Այնտեղ որոշւում է Շամախում կազմակերպել մի ընկերութիւն, որը պէտք է նիւթապէս ապահովէր օրիորդական ուսումնարանի գոյութիւնը. «...ուստի անցեալ 1869 քուականում քացեց (Անդրէաս Արք. Անդրէասեանը - Գ.Ա.) մի թերեւ եւ դիմին եղանակ ժողովրդեան ձեռնատու եւ նպատամատոյց լինելու յիշեալ դպրոցին, որով ինքեանը աւելի ծանրութիւն զգալով կարողանան գէք գոյութեան մէջ պահել իրանց ուսումնարանը իրանց լուսաւորութեան առիթը»<sup>129</sup>: Արարատ ամսագրում հրատարակուած ցուցակից հետեւում է, որ 1870 Փետրուարի 7ի տուեալներով դպրոցի օգտին նուիրատուութիւն են կտարել 89 հոգի, իսկ հանգանակուած գումարը կազմել է 521ռ.<sup>130</sup>: Այդ գումարով հնարաւոր է եղել ապահովել դպրոցի ուսումնական գործընթացը: Դպրոցն ունեցել է իր երգչախումբը, որի զեկավարն է եղել Բաղդասար սարկաւագը<sup>131</sup>: 1873ին դպրոցն ունեցել է մէկ նախապատրաստական եւ մէկ առաջին դասարան, 4 ուսուցիչ եւ 41 աշակերտ<sup>132</sup>. 1874ին՝ 61 աշակերտ՝ 2 ուսուցիչ<sup>133</sup>: Նոյն թուականին դպրոցի նախական դասարանն ունեցել է 65 աշակերտ՝ 1 ուսուցիչ<sup>134</sup>: 1875ին դպրոցի աշակերտների թիւը դարձեալ նուազել է՝ հասնելով 58ի, ուսուցիչների թիւը մնացել է նոյնը՝ 2 հոգի<sup>135</sup>: 1877ին դպրոցն ունեցել է 4 ուսուցիչ՝ 53 աշակերտ<sup>136</sup>: Դպրոցի շէնքը խարխուլ լինելու պատճառով 1879ին ձեռնարկւում է նոր շինութեան կառուցման աշխատանքների: Նոր շինութիւնը նախաձեռնել է Շամախու թեմի առաջնորդ Թաղ-էռս

